Արարատի սոյն համարին իբրև յաւելուած կցուած է Մայր Աթոռի և թեմական հաւատաւորութիւնների 1910 թ. նախահաշիւը։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Խոնարհաբար կխնդրեմ խմբագրութենէդ բարեհաճել յետագայ բարի գործն հրատարակել «Արարատ»ի միջոցաւ։

Լուգանսկաբնակ ամուրի Սարգիս Խաչատրեան Փափազեանն այս օրերս տեղւոյս Լուգանսկ քաղաքի Հայ Աղօթատան օգտին նուատարական կարգաւ կտակեց իւր բարեվաստակ շարժական և անշարժ կայքը, որ վաթսունէն եօթանասուն հազար-ռուբլի գումարի կհասնի։

Այս կտակի առթիւ Լուգանսկի Հայ գաղութն իւր շնորհակալութեամբն պարտաւոր է Բահմուտ քաղաքի Հայ Աղօթատան Արժանապատիւ Սարգիս աւագ քահանայ Մաքսըմաճեանի աշխատանաց։

Կտակակատար նշանակուած են երկու անձն, մէկը՝ նոյն Տէր Սարգիս աւագ քահանայ Մաքսըմաճեանը և միւսը՝ պ. Յակոբը Ադամեան Թովմասեան։

Կտակարարի փափագներէն մէկն է այն տեղ Լուգանսկի մէջ Հայ եկեղեցի և ծխական դպրոց շինել։

Ուստի շատ և շատ շնորհակալութիւն ինչպէս այն բարի գործն անող պ. Սարգիս Խաչատրեան Փափազեանին, այնպէս ալ անոր պատճառ եղող՝ տեղւոյս Լուգանսկ քաղաքի Հայ Աղօթատան հիմնադիր՝ յիշեալ Արժանապատիւ Տէր Սարգիս աւագ քահանայ Մաքսըմաճեանին։

24 ապրիլի 1910 թ. Գեորգ Քիրիշեան.
Լուգանսկ
(Եկատերինոսլաւի նահանգի)